ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Շինարարի օրվա առթիվ

08.08.2021

Սիրելի շինարարներ, ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ մասնագիտական տոնի առթիվ:

Մեծ գնահատանքի է արժանի Ձեր անձնվեր աշխատանքը և կարևոր դերակատարումը մեր պետության առաջընթացի ու շենացման գործում:

Ձեր կերտած ճարտարապետական արժեքների, կառուցած տարբեր սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների շնորհիվ առավել հաճելի և հարմարավետ միջավայր եք ապահովում ոչ միայն մեր ազգաբնակչության, այլև Հայաստան ժամանող հյուրերի համար:

Թող Ձեր վաստակը շարունակի ծառայել մեր երկրի շենացմանն ու ազգաբնակչության բարօրությանը: Ձեզ քաջառողջություն և անկոտրում կամք եմ ցանկանում: